ՔԱՐՏԵԶԱԳՐՔ

«Արցախ. քարտեզագիրք»
ծրագիրն իրականացվել է
ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից
ՀԿ-ներին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի և
Հայաստանի երիտասարդական հիմնադրամի
հայտարարած մրցույթի շրջանակներում:

Քարտեզագիրքը ստեղծվել է «Հոգու պարտք» հայրենագիտական
հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և ՀԵՌՈՒ
հիմնադրամի աջակցությամբ:

© «Հոգու պարտք» հայրենագիտական Հ/Կ
© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2016

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՌՈՒ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՀՈԳՈՒ
ՊԱՐՏՔ»

Մեծ Հայքի Արցախ կամ Փոքր Սյունիք նահանգն իր տարածքով եզրափակում է Հայկական բարձրավանդակը հյուսիս-արևելքից: Նրա հյուսիսային և կենտրոնական գավառները գտնվում են Կուր, իսկ հարավայինները՝ Արաքս գետի ավազանում: Հյուսիսից հարավ ուղղությամբ երկրամասի ջրհավաք ավազանի (հիմնականում արևելյան ուղղությամբ հոսող) գլխավոր գետերն են Արթինաջուրը, Գանձակը կամ Ոսկեանապատի ջուրը, Կուրակը, Սևջուրը, Ինջան, Տրտուն (ունի երեք մեծ վտակներ՝ Լև, Դուտխու և Թրղի), Խաչենը, Կարկառը, Խոնաշենը, Վարանդան և Իշխանագետը:

Առավելապես լեռնային երկրամասի ամենաբարձր գագաթներն են Գյամիշը (3725 մ), Մռավը (3340 մ), Ալիարակը (3066 մ), Մեծ Քիրսը (2725 մ) և Դիզափայտը (2448 մ):

Արցախը հնագույն ժամանակներից ամբողջությամբ մաս է կազմել և ամենաաշխույժ դերակատարումն է ունեցել հայոց կյանքի բոլոր ասպարեզներում՝ ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային և այլն:

Հայտնաբերված հնագիտական հուշարձանները (Ազոխ, Մեծ Թաղեր, Շուշի, Խոջալու, Առաջաձոր և այլն) բացահայտել են, որ Արցախի տարածքում մարդու բնակությունը սկիզբ է առնում դեռևս նեանդերթալյան (շուրջ 300 հազար տարվա վաղեմություն) ժամանակաշրջանից և անընդմեջ հարատևում է մինչև մեր օրերը:

Ուրարտական (Վանի կամ Արարատյան) Հայաստանի (մ. թ. ա. Թ - Է դդ.) հզորության ժամանակաշրջանում Արցախը եղել է առնվազն այդ երկրի քաղաքական գերիշխանության ներքո (այդ մասին է ազդարարում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի տարածքում հայտնաբերված սեպագիրը), իսկ Երվանդունիների (մ.թ.ա. Զ - Բ դդ.), Արտաշեսյանների (մ. թ. ա. 189 - մ. թ. Ա դարասկիզբ), Արշակունիների (66 - 428 թթ.) հայկական թագավորական հարստությունների օրոք՝ պարզապես Հայաստան պետության կազմում:

Է դարում ստեղծված Աշխարհացույցի համաձայն՝ Արցախն ուներ 15 գավառ՝ Մեծ Կվենք, Քուստ-ի Փառնես, Կողթ, Աղվե, Տոռի, Բերդաձոր, Վայկունիք, Մեծ Առանք, Ռոտ-ի Պազկան, Պիանք, Պազկանք, Մուխանք, Մյուս Հաբանդ, Հարճլանք և Սիսական-ի Ոստան:

Թ դարում, հակառակ իշխանապետ Եսայի աբու Մուսեի գլխավորությամբ ցույց տված հուժկու դիմադրության, Արցախը նվաճում են արաբները: Նրանցից ազատագրվելուց հետո առանձին իշխանությունների (Խաչեն, Քթիշ), մասամբ նաև Փառիսոսի թագավորության հետ այն ենթարկվում է հայոց Բագրատունիների տիրապետությանը (885-1045): Ընդ որում, ի դեմս Խաչենի իշխանության՝ բավականաչափ ընդարձակված տարածքների, արևմուտքում արցախյան տիրույթների սահմանը հասնում էր մինչև Շողագա վանք (այսինքն՝ բուն Արցախի սահմաններից դուրս Խաչենն ընդգրկում էր նաև հարևան Սյունիքի որոշ հատվածներ, ի մասնավորի՝ Սևանա լճի արևելյան և հարավային ափերը):

Ոչ մեծ փոփոխություններով արցախյան իշխանական տներն իրենց սահմանները պահպանում են մինչև 1220-ական թթ. սկիզբ առած մոնղոլական արշավանքները, որոնց հետևանքով մեծապես և անվերադարձ քայքայվում է երկրամասի տնտեսական և մշակութային կյանքը:

ԺԳ-ԺԴ դդ. ընթացքում, ըստ էության, մոնղոլներն իրենց քայքայիչ գործունեությամբ արցախական հայաշխարհը հասցնում են այնպիսի հետին կացության, որ այն այլևս ի զորու չէր դիմակայելու ԺԵ-ԺԶ դարերում երկրամաս թափանցած թյուրքական ծագմամբ սևոչխարավորներին (կարա-կոյունլուներ) և սպիտակոչխարավորներին (ակ-կոյունլուներ):

ԺԶ-ԺԸ դդ. Արցախը գտնվում էր պարսից տիրապետության ներքո: Այս ժամանակաշրջանը նշանավորվում է պարբերաբար բորբոքվող թուրք-պարսկական հակամարտություններով, որոնք, բացի արհավիրքներից և համընդհանուր քայքայումից, երկրամասին այլ բան չէին «պարգևում»: Թերևս ինչ-որ չափով կարելի է միայն առանձնացնել ԺԵ դարը, երբ շահական հրովարտակներով իրենց նախկին իրավունքների ճանաչումն ու վավերացումն են ստանում հին հայկական իշխանական մեծ ու փոքր տների մի շարք ներկայացուցիչներ, որով և ծնունդ են առնում հայկական կիսանկախ իշխանությունները (մելիքությունները):

Օտար ցեղերի նկատմամբ առավել հուսալի պաշտպանություն իրականացնելու մտահոգությամբ նրանք, ԺԵ դարի վերջին միավորվելով դաշնակցային պարտավորությունների հիման վրա, ստեղծում են Խամսայի մելիքությունը (իշխանապետությունը): Վարչական այս նոր միավորի կազմում գտնվող Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունների ընդհանուր սահմանները Գանձակի մատույցներից հասնում էին մինչև Արաքս գետը: Հարկ է նշել, որ արևմտյան սահմանի գրեթե ողջ երկարությամբ միմյանց հաջորդելով ձգվում էր Խամսային սահմանակցող նույնպես հայկական

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 298-387 ԹԹ.


ՍԱՍԱՆՅԱՆ
ՍՍՍԱՆՅԱՆ
ՍՍՍԱՆՅԱՆ
ՍՍ

իշխանապետությունների շղթան՝ սկսած Ոսկանապատից մինչև Գեղարքունիքի և Քաշաթաղի մելիքությունները: Այս իրողությունը մեծապես նպաստում էր, որ գոնե արևմտյան կողմից Խամսան փաստացի զերծ մնար օտար ցեղերի ավարառու արշավանքներից: Սակայն, եթե այդ կացությունը պաշտպանության առումով համեմատաբար հուսալի էր հարևան մանր իշխողների ոտնձգություններին դիմակայելու առումով, ապա հետևանքները բոլորովին այլ էին պատերազմական խոշորածավալ հակամարտությունների ժամանակ: Մասնավորապես՝ 1720-ական թթ. երկրորդ կեսին Խամսայի մելիքությունն ահեղ փորձության է ենթարկվում երկրամաս ներխուժած օսմանյան բանակների ծավալած ավերիչ գործողությունների հետևանքով: Օսմանցիների անօրինակ հալածանքներից (կացությունը բարդացնում և մղձավանջի են վերածում հարևան մահմեդական խանությունները ու սուլթանությունները և թալանի հարմար առիթով ոտքի ելած լեզգիական հորդաները) հենց այդ տարիներին պարպվում են Հայաստանի բազմաթիվ գավառներ (գրեթե ամբողջությամբ կամ իսպառ հայաթափ են լինում Զակամ, Միափոր, Ծար կամ Վերին Խաչեն, Քաշաթաղ, Քաշունիք, Կովսական, մասնակի՝ Շամքոր, Գարդման, Վայոց ձոր, Ծղուկ, Ձորք և Արևիք գավառները): Մի շարք գավառների հայաբնակ հարյուրավոր գյուղերն էլ մահվան սպառնալիքի ներքո դավանափոխ են լինում (այդ ժամանակ է մահմեդականացել Կապաղակ, Շաքե, Դասան, Խաչմաս և հարակից գավառների հայ բնակիչների մեծագույն հատվածը): Արցախում կրոնափոխ են լինում Տող գյուղում բնակվող Դիզակի մելիքական տան մի ճյուղի ներկայացուցիչները՝ Մելիք-Եգանյանների շառավիղները, որոնք արդեն խորհրդային տարիներին կրում էին Եգանով ազգանունը և համարվում էին աղրբեջանցիներ:

Ինչ վերաբերում է Արցախի սիրտը ներկայացնող Խամսայի մելիքությանը, ապա, ճիշտ է, հայկական կիսանկախ այս իշխանությանը հիմնականում հաջողվում է կազմակերպված պաշտպանության շնորհիվ վերապրել արհավիրքը, սակայն զանգվածային սպանությունների, գերեվարությունների և արտագաղթերի հետևանքով երկրամասն արձանագրում է բնակչության թվաքանակի կտրուկ նվազում, ընդ որում, Խամսան կորցնում է իր կենսական գավառներից մեկը՝ Ծարը կամ Վերին Խաչենը:

Ավելի ուշ հայ մելիքների հարաբերություններում ծայր առած փոխադարձ անհանդուրժողականությունը, գլուխ բարձրացրած եսականությունը և ազգային գերակա շահի անտեսումը հանգեցնում են ողբերգական հետևանքների: Ստեղծված իրավիճակից անմիջապես օգտվում են թյուրքական ծագմամբ խաշնարած ցեղերը և մասնավորապես ջվանշիրլու ցեղախմբի առաջնորդ Փանահը: Վերջինս, օգտվելով Վարանդա գավառի մելիք Շահնազարի անխոհեմ թողտվությունից, տեր է դառնում Արցախի սրտում գտնվող Շուշի բերդավանին, հիմքը դնում Ղարաբաղի խանության (1747 թ.) և ասպատակություններով կամաց-կամաց ի հաշիվ ավելի ու ավելի թուլացող հայկական մելիքություններից խլվող նորանոր հողատարածքների՝ սկսում է ամրացնել և ընդարձակել խանության սահմանները:

1805 թ., երբ երկրամասում իշխում էին Փանահի որդի Իբրահիմ խանի ժառանգորդ բեկերը, վարչական այս նոր միավորը միացվում է Ռուսական կայսրությանը, իսկ 1822 թ. լուծարվում և կարճ ժամանակ անց մտնում է Ելիզավետպոլի նորաստեղծ նահանգի կազմում:

Ռուսական տիրապետության շրջանում, բնիկներից և թյուրքական ծագմամբ եկվոր ցեղերից զատ, երկրամասում սկսում են հաստատվել նաև այլ ազգությունների պատկանող վերաբնակիչներ: Նշանակալի էին հատկապես 1818 թ. մի քանի գաղթավայրեր հիմնած գերմանացիներն ու 1840-ական թթ.-ից ի վեր շուրջ երկու տասնյակ գյուղեր հիմնադրած ռուսները (գաղթականների երկու խմբերն էլ իրենց երկրներից արտաքսվել էին որպես աղանդավորներ):

Ռուսական իշխանությունների համար հենց առաջին տարիներից անլուծելի խնդրի էր վերածվել կովկասյան թաթարներին (ընդհանրական այդ անվամբ սկսեցին կոչել թյուրքական ծագմամբ զանազան ցեղերին) նստակեցության պարտադրելով իրենց վայրենի բարքերից հեռու պահելու ծրագիրը: Բանն այն էր, որ, եթե դաղստանյան լեզգիները ԺԸ դարում պարբերաբար ասպատակում և թալանում էին Արցախի գյուղերն ու ամեն անգամ մեծ ավարով և նույնիսկ գերիներով հեռանում իրենց հայրենիքը, ապա երկրամաս սողոսկած թյուրքական ցեղերը նույն զբաղմունքով գոյատևում էին առանց լքելու իրենց թալանատեղիները:

Ուշագրավ է, որ եկվոր տարրի (գերմանացիներ և ռուսներ) առկայությամբ ուրախ էին թե՛ երկրի բնիկները, թե՛ արդեն տեղացի համարվող կովկասյան թաթարները: Ընդ որում, եթե առաջիններն ուրախ էին երկրագործական նոր գործիքներին և հողագործական որոշ հմտությունների (ռուսների միջոցով), ինչպես նաև տնաշինության, գինեգործության և արհեստների բնագավառի նորույթներին (գերմանացիների միջոցով) ծանոթանալու և նրանցից սովորելու ընձեռված աննախադեպ հնարավորությունների համար, ապա կովկասյան թաթարները՝ գաղթականների չարքաշ աշխատանքով ստեղծվող վաստակը որպես թալանի նոր աղբյուր ընկալելու համար:

Իհարկե, ռուսական իշխանությունները գաղթականների (հատկապես ռուսներին) տեղավորման գործընթացում բնիկների հանդեպ բավական կոպիտ և անգամ բռնի միջոցներ էին կիրառում (հայկական գյուղերից ոչ միայն հողատարածքներ էին խլվում և տրամադրվում ռուսական նորահիմն գյուղերին, այլև երբեմն նույնիսկ բռնագրավում էին դարերից ի վեր հայաբնակ գյուղը, արտաքսում բնակչությանը և այն տրամադրում ռուս վերաբնակիչներին: 1865 թ. այդպես եղավ զուտ հայաբնակ ու հնամենի Պարիս գյուղի հետ): Նրանց խտրական վերաբերմունքը, իհարկե, անվստահության տեղիք էր տալիս և բացասաբար էր անդրադառնում ազգերի փոխհարաբերությունների վրա, սակայն, դրանով հանդերձ, ի տարբերություն խանական ժամանակաշրջանների, անհամեմատ ավելի օրինական էր (հաճախ ձերբակալվում և աքսորվում էին հատկապես հայկական գյուղերն ավարառող ավազակախմբերի առաջնորդ «ղաչաղները»):

Գոյությունը թալանով պահպանելուն վարժված կովկասյան թաթարներից երկրի օրինապահ քաղաքացիներ ձևավորելը ցարական կառավարության համար բավականաչափ բարդ էր: Այնուամենայնիվ, իշխանությունները ձեռնամուխ են լինում անուղղելի թվացող իրենց հպատակ ազգաբնակչության «վերադաստիարակման» բարդ գործին, և այդ բնագավառում իրականացրած առաջին քայլը լինում է կովկասյան թաթարներին նստակեցություն պարտադրելը (հակառակ դեպքում նրանց սպառնում էր արտաքսում երկրի սահմաններից): Այդ գործընթացն իրականում տևում է մի քանի տասնամյակ և գրեթե ամբողջանում միայն 1910-ական թթ.:

Այս ամենի հետևանքով Արցախում ձևավորվում է ազգաբաշխական միանգամայն նոր իրավիճակ: Բանն այն է, որ դեռևս մոնղոլական արշավանքներից ի վեր, դարերի ընթացքում երկրամասի բնիկներն օտար ցեղերի ասպատակությունների դեմ ավելի հուսալի պաշտպանություն իրականացնելու թելադրանքով հեռացել էին առավել խոցելի՝ դաշտավայրային շրջաններից, իսկ 1720-ական թվականներին օսմանյան ներխուժման հետևանքով կորցրել էին նաև երկրի բարձրլեռնային որոշ հատվածներ և ի վերջո կղզիացել երկրամասի միջինլեռնային, գլխավորապես՝ անտառապատ գոտում (այն, որպես բնության պարգև, ինքնին հասկանալի է, պաշտպանության տեսանկյունից հավելյալ հարմարություն ունի): Ի վերջո, թյուրքական խաշնարած ցեղերի նստակեցության անցնելու հետևանքով երկրամասում ստեղծվում է մի իրավիճակ, երբ հայաբնակ գյուղերի՝ նախալեռնային գոտիով ձգվող երկար շղթան երկու կողմից կարծես հայտնվում է կովկասյան թաթարների աքցանի մեջ:

1886 և 1914 թթ. ըստ բնակավայրերի իրականացված մարդահամարի տվյալները, կապված խաշնարածների նստակեցության անցնելու իրողության հետ, խիստ ուշագրավ են: 28 տարվա ընթացքում բնական վերարտադրողունակության պայմաններում բնակչության թվաքանակի համատարած և որոշակի միջին աճ էին գրանցել առավելապես ռուսները, ապա հայերն ու գերմանացիները, մինչդեռ կովկասյան թաթարներով բնակեցված գրեթե բոլոր գյուղերում, հակառակ բնական աճի նկատելի ավելի բարձր ցուցանիշների, արձանագրվել էր բնակչության թվաքանակի կտրուկ նվազում: Առաջին հայացքից անբացատրելի թվացող այս երևույթի պատճառը, ինչպես նշել են ժամանակի հետազոտողները, հետևյալն էր. ինչքան մեծ թվով կովկասյան թաթարներ էին նստակեցության անցնում, այնքան մարդահամարներն ավելի ստույգ էին իրականացվում (գնալով պակասում էին նույն ցեղախմբին մերթ ամառանոցում, մերթ ձմեռոցներում և կամ քոչի ժամանակ բազմակի արձանագրելու փաստերը):

1905-1907 թթ. արցախահայությունը մարդկային զգալի կորուստներ է կրում ցարական իշխանությունների կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումների հետևանքով, որի ժամանակ ավերվում և թալանվում են հայաբնակ բազմաթիվ գյուղեր: Սակայն, հակառակ ցարական իշխանությունների՝ ի պաշտպանություն կովկասյան թաթարների բացահայտ կողմնակալ վերաբերմունքի, հայ վրիժառուներին հաջողվում է պատժել առավել գազանաբարո վարքագիծ ցուցաբերած թաթարաբնակ գյուղերը:

1918 թ. մայիսի 27-ին Թուրքիայի նախագծով Ադրբեջան անվամբ պետության ի հայտ գալուց և մայիսի 28-ին Հայաստանի անկախացումից հետո Արցախը հայտնվում է Ադրբեջանի մուսավաթական իշխանության տարածքային հավակնությունների շրջանակում: Սակայն Ղարաբաղի ազգային խորհուրդը նույն տարվա ընթացքում Շուշիում գումարած երեք համագումարների (հուլիսի 22, սեպտեմբերի 6 և

17), ինչպես նաև 1919 թ. փետրվարի 19-ի և ապրիլի 23-ի որոշումներով կտրականապես մերժում է այդ պահանջը: Ի պատասխան նաև 1920 թ. մարտի 4-ին կայացած Ազգային խորհրդի 8-րդ համագումարի մերժողական որոշմանը՝ մուսավաթական ավազակախմբերը թուրքական զորքերի մասնակցությամբ փորձում են արցախահայերին ուժով ծնկի բերել և նույն ամսվա 23-ին հարձակվում են Շուշի քաղաքի հայոց թաղերի և հայկական բազմաթիվ գյուղերի վրա:

Ի վերջո, 1923 թ. բառիս բուն իմաստով անդամահատված (առանց Հյուսիսային Արցախի և նույնիսկ առանց Շահումյանի շրջանի) Արցախից խորհրդային իշխանությունները ձևում են Խորհրդային Հայաստանի հետ ընդհանուր սահմանից միտումնավոր զրկված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն ու Ստալինի կամքով այն հաստատում խորհրդայնացած Ադրբեջանի կազմում:

Հակառակ ստեղծված կացության՝ հայերը, այնուամենայնիվ, շարունակում են հուսալ, թե խորհրդային երկրում կարելի է հասնել արդարության հաղթանակին: ԼՂԻՄ-ը Ադրբեջանի Հանրապետությունից անջատելու և Հայաստանի հետ միավորելու խնդրին փորձում է հետամուտ լինել Խորհրդային Հայաստանի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, սակայն այդ իսկ պատճառով 1935 թ. գնդակահարվում է, իսկ Անդրֆեդերացիայի լուծարումից (1936 թ.) հետո էլ ավելի են սահմանափակվում ԼՂԻՄ հայ ազգաբնակչության՝ առանց այդ էլ խիստ չափավոր իրավունքները:

Այնուհետև մինչև 1988 թ. խնդիրը ծխում, բայց երբեք չի մարում: Նշյալ թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում է ընդունում՝ դիմում հղելով Ադրբեջանի գերագույն խորհրդին՝ նրա կազմից դուրս գալու և Հայաստանի գերագույն խորհրդին՝ նրա կազմի մեջ մտնելու խնդրանքով, ինչպես նաև ԽՍՀՄ գերագույն խորհրդին՝ նշյալ դիմումը բավարարելու ակնկալությամբ:

Այս ամենին ադրբեջանական իշխանությունները պատասխանում են Արցախի սահմաններից դուրս գտնվող Ադրբեջանի զանազան քաղաքներում և մոտ 100 գյուղական բնակավայրերում ապրող անմեղ հայերի նկատմամբ դաժան հաշվեհարդարով (եղեռնագործություններն առանձնապես արյունալի բնույթ են ստանում Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ և մի շարք այլ քաղաքներում): Ողջ հանրապետությունով մեկ սանձազերծված հակահայկական հիստերիայի հետևանքով իրենց ծննդավայրերը հարկադրված լքում է ավելի քան 450,000 հայ:

1991 թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանն Արցախը (Լեռնային Ղարաբաղ) հռչակում է անկախ հանրապետություն: Սրանից էլ առավել գազազած ադրբեջանական իշխանություններն ազատատենչ արցախցիների նկատմամբ սանձազերծում են իսկական պատերազմ, որը տևում է մինչև 1994 թ. մայիս ամիսը և ավարտվում հայկական կողմի փայլուն հաղթանակով:

Այսպիսով՝ Արցախի ազատության համար դեռևս 1722 թ. սկիզբ առած, 1918 թ. ընդհատված, 1923 թ. խեղված, 1935 թ. Խորհրդային Հայաստանի առաջին քարտուղարի սպանությամբ զսպված և 1988 թ. վերարթնացած հայոց պայքարը պսակվեց փառավոր հաղթանակով: Այն ձեռք բերվեց բազում հայորդիների խիզախության, օրնիբուն աշխատանքի և անօրինակ զոհողությունների գնով: Նրանցից 7000-ն անմահացան հաղթանակը կերտելու ճանապարհին:

Երկիրն արդեն պատմության գիրկն է ուղարկել իր անկախ գոյընթացի քառորդդարյա ժամանակաշրջանը, սակայն ադրբեջանական ելուզակներն իրենց թշնամական գործողություններով պարբերաբար ցույց են տալիս, որ դեռևս չեն հաշտվել երբևէ իրենց չպատկանած Արցախ հայաշխարհի կորստյան փաստի հետ. վկա՝ 2016 թ. ապրիլի սկզբին սանձազերծած հերթական ռազմական ագրեսիան, որը, ինչպես բոլոր նախորդ համանման ոտնձգությունները, նույնպես ստացավ իր արժանի հակահարվածը:

Համայն հայության ազգային իղձերը կյանքի կոչած և յուրաքանչյուր հայորդու ոգու բերկրանքի անհատակ աղբյուր ազատ Արցախը մեծ մասամբ արդեն հասցրել է սպիացնել պատերազմի հետքերը: Երկրում ապրում և գործում է անկախության տարիներին ծնունդ առած մի ողջ սերունդ, որն ամենայն իրավունքով հպարտանում է հայրերի մաքառումների արդյունքով և ջանում է էլ առավել ամրացնել ու զորացնել այնքան երկար տառապելուց հետո իր ազատությունը վերագտած սրբազան Հայրենիքը:

Անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավելի ու ավելի է վերաշինվում, գեղեցկանում և հզորանում բազում սերունդների ոգու երազներով շաղախված Արցախը: Այն ներկայումս շուրջ 150.000 խաղաղ, ստեղծագործ ու աշխատասեր բնակիչներով հայկական երկրորդ հանրապետությունն է, որը ոչ հեռու ապագայում, անկասկած, կտոնի նաև մայր հայրենիքի հետ վերամիավորվելու պատմական բերկրալից իրադարձությունը:





Հատված Էդվարդ Վելլերի՝ 1858 թ. հրատարակած քարտեզից

Thasis, Sebastopl.
Mogrus, Nigrus loc. & fl.
Apsarus
Acampsis
Petra
Rathis
Portus Lunus
Cissa
Athenæ
Cerasus
Tripolis
Pharnacia
Cerasus
Fordyle
Rhizus
Trapezus
Marmani
Harmozica, Harmostis
Askarath
Tsikhe
Seusamara
Mestheta
Caspia
Chabala, Cabalaca?
Albaniæ pyle
Albanus
Cholbota
Kura
Cholis (Choloris)
Gaulita
Artanissa
Artahan
Sacæ
Thasia
Taschir
Chorzene
Lalla
Sanora
Schamkhor
Samunks?
Gangara
Gandzak
Osica
Cyrus, Corus, Cyrus
Camuchia
Schamakhi
Sioda?
Taga
Domana
Gemmas
Ziamura
Ani
Andaga??
Cœnopolis
Armenia
Armavir
Vagharschapat
Gelduna
Rheghi
Tibium
Dovin
Artaxata
Artaschat
Naxuana
Nakhdschavan
Soducene
Bagrandene
Bagrevand
Aghiovit
Bakovan
Zamuane
Zangezur
Mananzean
Minyas
Arrhene
Harkh
Arsissa
Thospitis
Isumbus
Araxes, Bactrus, Halmus
Colsa?
Morandu
Ardebil
Thavresch
Thebarmai
Ganarga
Maragha
Gaza, Gazaca
Pharaspia, Phraaspa, Vera
Ecbatana II.us Ganzaca?
Shiz, (Haran)
Ecbatana
Bitanna
Belnar?
Silerur
Ninive
Ninus
Thalsaphata
Libana, Labbana
Baba
Thebeta
Liba?
Myadonius
Thallaba
Thigubis
Comisimbela
Danaba
Davana, Berralis
Acrabu?
Thilati comum
Hamurrhoa
Avirch
Gozan, Chebar
Resaina, Theodosiopl.
Callirhoe
Sahal
Carrhæ, Haran
Tharrana
Edessa, Callirrhoe
Oallaba
Minnocerta
Nisibis
Antiochia
Bithiga
Macharta
Rene
Arzamo
Arcama
Horre
Anastasiopl.
Amudis
Sarbane
Cersichor
Sisauranon
Dara
Mardes
Bebasa
Marcurum
Nisiranum
Dabæ
Azochis
Carcha
Sanigia
Phabdium?
Cephalæ
Cephalæ
Cast. Cepha
Diglito
Sardeva
Samachis
Arcaiepis?
Carcha
Samosata
Suma
Bithias
Porsica
Ur, Orrhoa
Tela
Antaniopl. Constantia, Lorne
Moxoene
Mokkh
Moschia, Mos
Tigranocerta
Arzen
Corine
Calmilla
Amurea
Barzalo
Sinzic?
Cisca
Melitene
Arsamosata
Polchis
Arsenia
Artasigarta
Ingilt
Derbeta
Nisara
Julianopolis
Aburna
Corna
Thespia
Bigrat
Tauranitis
Taurus
Niphates
Gordyæ
Gordyæ
Chaldæi
Chaldæi
Arapachitis
Chalybonitis
Chalybonitis
Arzanene
Azzanene
Azzanene
Sarigana
Gaza, Gazaca
Saghamasd
Ganzaca
Ecbatana
Bitanna
Belnar

Հատված Իգնատիուս Խաչատուրյանի՝ 1751 թ. Վենետիկում հրատարակած քարտեզից



Հատված Կովկասյան զինվորական օկրուգի քարտեզագրության բաժնի՝ 1900-ական թթ. սկզբներին հրատարակած քարտեզից



Հատված Կովկասյան զինվորական օկրուգի քարտեզագրության բաժնի՝ 1903 թ. Թիֆլիսում հրատարակած քարտեզից


ՇԱԿԱՇԵՆ
ՀՈՂԻ ԿԱՄ ԱՐԱՇ
ՔԱՐԱՍԱՆ
ՄԵՆ ԿՈՂՄԱՆՔ
ՁԻՒԱՆ ՇԻՐ
ԳԱՌԱՌ
ՁՐԱՔԵՐԴ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱԿԵՐՏ
ԱՂՎԱՆ
ՍՈՒՐԽԱՆՔ
ՄԱՍՂԱՆԻ ԴԱՂԱՏ
ԴԻԱՆՔ
ԱՐԱՔԱԾՈՏՆ
ԱՐԱՔԱԾՈՏ
ՎԱՀՐԱՄ
ԳԱՐԻՆ
ՔԱՐԱՍԱՆ
ՄԵՆ ԿՈՂՄԱՆՔ
ՍԱՍՈՒՆ
ՄՈՍԿԱՆՔ
ՏՈՒՐ
ՏՐԱՊԻԶՈՆԻ ԳԱՒԱՌ

Հատված Կովկասյան զինվորական օկրուգի քարտեզագրության բաժնի՝ 1900-ական թթ. սկզբներին հրատարակած քարտեզից



Հատված 1921 թ. հրատարակված քարտեզից



Հատված 1920-ական թթ. հրատարակված քարտեզից

Հայկազունյաց աշխարհի եպիսկոպոսարանների, վանքերի, եկեղեցիների և սրբավայրերի 1691 թ. քարտեզի՝
(հեղինակ՝ Երեմիա Չելեպի Քյոմյուրճյան Կոստանդնուպոլսեցի)
Արցախին վերաբերող նշումները՝ արտատպված Գաբրիելլա Ուլուհոջյանի գրքից
(**Uluhogian G.**, Un' antica mappa dell' Armenia. Ravenna, 2000, pp. 51-70)

«Սուրբ Յովհաննէս ուխտատեղ»:

«Թրջեվի վանք Ուռեկան, ուր նախ եղին զմարմին Եղիշէի առաքելոյ»:

«Հազարու իլան աղբիւր. արժանաւորաց ջուր երեւի. եւ անարժանից ցամաք»:

«Եպիսկոպոսարան. Խաթ առաքելոյ վանք, սուրբ Աստվածածին»:

«Եպիսկոպոսարան. Եղիշէ առաքելոյ աթոռ, աջն գոյ»:

«Եպիսկոպոսարան. Չարբերդ վանք»:

«Արիփսիմեա եպիսկոպոս եւ Յովսէփ քահանայ եւ Այիթալա սարկաւագի նահատակութեան տեղն ծառ մրտենի բուսաւ, բժիշկ ցաւոց. եւ Անանիայ պարսիկ նահատակեցաւ»:

«Եպիսկոպոսարան. Շախկախ վանք, ուր շղթայ Պետրոսի առաքելոյն»:

«Անապատ արանց»:

«Բէկաթաղենց վանք. եպիսկոպոսարան»:

«Եպիսկոպոսարան. Կթեշավանք, Լուսաւորիչ շինեաց»:

«Էաղուռն անապատ»:

«Եղիշէի անապատ»:

«Վանք Տաշտանոց»:

«Եպիսկոպոսարան. սուրբ Յակոբայ վանք, ուր մասն կան Մծբնայ Յակոբ հայրապետին»:

«Կուսանաց անապատ»:

«Եպիսկոպոսարան. Հիրերայ վանք»:

«Ամարասու եայլա կաթողիկոսարանին»:

«Եպիսկոպոսարան. Տուզաղու Խաչափայտ վանք»:

«Վանք եպիսկոպոսարան եւ գերեզման Եղիշեի, Ջրվշտիկ. նշխար Վաջագան թագաւորի»:

«Անապատ Մեծշէն»:

«Դիզափայտ լեառն. Թաթարք զճգնաւորս եւ զհաւատացեալս խրցիւք գարւոյ եւ ցորենոյ այրեցին»:

«Լեառն. Թագուհին եւ բազումք նահատակեցան եւ Քաղաքաբլուր կոչեցաւ»:

«Անապատ Խաթայու»:

«Եպիսկոպոսարան. Ծարայ վանք»:

«Մարդաղաւնեաց խաչ. Թաթէոս բերաւ ի տաշտէն ուր զՓրկիչն լուացին»:

«Եպիսկոպոսարան. Ամարաս, առաջին աթոռ Գրիգորիսի թոռինն Լուսաւորչի: Եւ աստ յայտնեցան, ասեն, մեծի Վաջագան թագաւորին շիշ մի ի արեամբ Զաքարեայ քահանային եւ մասն Պանդալէիմօնի բժշկին և մասն Յովսէփ Արեմաթացւոյն. և Գրիգորիսի աջն և գերեզմանն աստ գոն»:

«Աթոռ Գանձասար եւ կաթողիկոսարան սուրբ Խաչ անուն. գոյ ծնօտ Լուսաւորչին զոր աներ Մագիստրոսի Ճիհանշիրայն բերել ետ. եւ մասն ի գլխոյ սուրբ Սկրտչին, եւ մասն Իզապուզտոյ եւ Դաւթի Դվնեցոյ սրբոց վկայիցն»:

«Կուսանաց անապատ Աւետարանոց»:

«Բղդրղան անապատ»:

«Վէրէնտէ»:

«Թէրթէր չայ յարեւելս գնայ եւ անցեալ զՊէրտէ քաղաքի ի Կուր գետ խառնի»:

«Ծեր Աւետարան ուխտատեղ»:

«Անապատ Պանանց»:

«Կէնճէ քաղաք. Խոսրով նահատակեցաւ»:

«Ծաղկոց անապատ»:

«Պէրտէ քաղաք. գահ թագաւորին Վաջագանի»:

«Դաւիթ եւ Համազասպ նահատակեցան»:

«Սուրբ Նշան վանք. եպիսկոպոսարան»:

«Վէրի Զէկէմ. Ղարամուրատ արանց անապատ»:

«Եպիսկոպոսարան. Փառիսոս վանք»:

«Եպիսկոպոսարան. Կիտապակ վանք»:

«Ոսկանապատ անապատ կուսանաց»:

«Կտաշինու անապատ»:

«Կուսանաց անապատ»:

«Կաթուղիկէ վանք»:

«Գրիգորի սուրբ Խաչ. ուխտատեղ»:

«Քեարխանէ ուխտատեղ. անապատ»:

«Ղարապաղի Եղինասար. եպիսկոպոսարան վանք»:

«Գ մանկանց ուխտատեղ. մասունք կան»:

«Չարեք անապատ. միանձունք Ճ (100) միաբանք, երբեմն եւս առաւելուն»:

«Կաղնայ խաչ. ուխտատեղ Փունղարի»:

«Արքայեկ անապատ»:

«Կիւլիստան. Ամենափրկիչ անապատ»:

«Պլանուխ ուխտատեղ»:

«Նէրքին Զէկէմ»:

«Քէմէնտար անապատ կուսանաց»:

«Շէմքիւռ գետս յարեւելս գնայ. զդաշտս առոգանէ լի տոհմականօք եւ հատանի»:

«Տիրատուր վարդապետի գերեզման, ուխտատեղ»:

«Եպիսկոպոսարան Խաշլապէկ վանք»:

«Գոշ անապատ»:

«Եպիսկոպոսարան. Սնաջուր վանք»:

«Ամենափրկիչ վանք, եպիսկոպոսարան: Խոսրովի գերեզման»:

«Մրգաձոր ուխտատեղ»:

«Խալխանէ խան»:

«Գամառան գաւառ Քրթմանիկ. գերեզման Յոհաննիսի Մայրագումեցւոյ երջանիկ վարդապետի»:



Հատված Երեմիա Կոստանդնուպոլսեցու՝ 1691 թ. կազմած քարտեզից

Արցախյան բնապատկերներ





Արցախյան բնակավայրեր

1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12

1. Տեսարան Շուշի քաղաքից
2. Տեսարան Տումի գյուղից (Հադրութի շրջան)
3. Տեսարան Գետաշեն գյուղից (Խանլարի շրջան)
4. Մեսրոպ քահանա Տեր-Գրիգորյանցի տունը (1889 թ.) Գետաշեն գյուղի կենտրոնում
5. Տեսարան Բանանց գյուղից (Դաշկեսանի շրջան)
6. Տեսարան Գյուլիստան գյուղից (Շահումյանի շրջան)
7. Տեսարան Դահրավ գյուղից (Ասկերանի շրջան)
8. ԺԹ դարավերջի բնակելի տուն Գետաշենում (Խանլարի շրջան)
9. Բեղդաձորի ենթաշրջանի Մեծշեն գյուղը (Շուշիի շրջան)
10. Տեսարան Դռնավարզ գյուղից (Ասկերանի շրջան)
11. Տեսարան Մյուրիշեն գյուղից (Մարտունու շրջան)
12. Հատված Մեսրոպ քահանա Տեր-Գրիգորյանցի՝ 1889 թ. կառուցած տնից (Խանլարի շրջան)

1	2	3	4	5
6	7	8	9	10

1-2. 1412 թ. ստեղծված ձեռագիր (Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարան)

3-4, 6-9. Մանրանկարների մի քանի էջեր 1559 թ. Ջրվշտիկ (Եղիշե առաքյալ) վանքում ստեղծված ձեռագրից

5, 10. Երկու էջ 1656 թ. Գանձասարի վանքում ստեղծված ձեռագրից



1902Ը.թ Յուլիսի 1-ին
Այս Ղարաղշլաղ գիւղի
Ուսուցչանարանի շինութիւնն
կառուցելէ Գրիգոր Սահակեան
Ոսկանեանցն
ЗДАНІЯ ШКОЛН ПОСТРОИЛЪ ГРИГОРІИ
СААКОВИЧЪ ВОСІСАНОВЪ





1	2	3
4	5	6	7
8	9	10	11

1. Գանձակ. Ափանասյան ուսումնարանի շենքը, 1909 թ.
2. Շուշի. Ռեալական դպրոցի շենքը
3. Մեծշեն գյուղի (Շուշիի շրջան) դպրոցը, 1902 թ.
4. Առաջաձոր գյուղի (Մարտակերտի շրջան) դպրոցը
5. Մարտունի գյուղի (Շամխորի շրջան) դպրոցը, 1911 թ.
6. Բաղա (Բաղենք) գյուղի (Շամխորի շրջան) դպրոցը
7. Սարուշեն գյուղի (Ասկերանի շրջան) դպրոցի շինարարական արձանագրությունը, 1890 թ.
8. Պետրոսաշեն գյուղի (Հադրութի շրջան) դպրոցը
9. Գետաշեն գյուղի (Խանլարի շրջան) ութամյա դպրոցը
10. Մեծշեն գյուղի (Շուշիի շրջան) դպրոցի շինարարական արձանագրությունը, 1902 թ.
11. Հացի գյուղի (Մարտունու շրջան) դպրոցը

1871



1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12

1. Տող գյուղի (Հադրութի շրջան) աղբյուրը, ԺԸ դար
2-3. Պեխի աղբյուրը (Շուշիի շրջան) և նրա շինարարական արձանագրությունը, 1871 թ.
4. Կեմրակուճ գյուղի (Հադրութի շրջան) աղբյուրը, ԺԹ դար
5. Մեծշեն գյուղի (Շուշիի շրջան) աղբյուրը, ԺԹ դար
6,10. Թաղոտ գյուղի (Հադրութի շրջան) աղբյուրը և նրա շինարարական արձանագրությունը, 1738 թ.
7-8. Պարին Պիժ վանքի աղբյուրը (Շուշիի շրջան) և նրա նորոգության արձանագրությունը, 1851 թ.
9. Մոխրենիս գյուղի (Հադրութի շրջան) աղբյուրը
11. Հաճավ գյուղի (Քարվաճառի շրջան) աղբյուրը, 1677 թ.
12. Թաղասեռ գյուղի (Հադրութի շրջան) աղբյուրը, 1915 թ.





1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12

1. Ցրտնոտ գյուղի (Քարվաճառի շրջան) կամուրջը, ԺԳ դար
2. Քարավազի հին կամուրջը (Հադրութի շրջան), վաղ միջնադար
3. Կամուրջ Գետաշեն գյուղում (Խանլարի շրջան)
4. Հոնուտի կամուրջը (Շուշիի շրջան) Կարկառ գետի վրա, ԺԸ դար
5. Լալազարի կամուրջը (Քաշաթաղի շրջան) Որոտան գետի վրա
6. Ջարվանեսի կամուրջը (Հադրութի շրջան) Տումաջրի վրա, ԺԳ դար
7. Տահիսի կամուրջը (Հադրութի շրջան) Իշխանագետի վրա, ԺԷ դար
8. Բանանց գյուղի (Դաշկեսանի շրջան) Մեծ կամուրջն Արքինաջուր գետի վրա
9. Ակնաղբյուրի կամուրջը (Ասկերանի շրջան) Վարանդա գետակի վրա
10. Մահտեսի Արանի կամուրջը (Ասկերանի շրջան) Ավետարանոց գյուղի մոտ, 1663 թ.
11. Բանանց գյուղի (Դաշկեսանի շրջան) Յանցի կամուրջն Արքինաջուր գետի վրա
12. Խռոված կամուրջը Վերիշեն և Ներքիշեն գյուղավանների (Շահումյանի շրջան) միջանկյալ հատվածում՝ Սևջուր գետի վրա (իրականում կողքին, քանի որ գետը շատ վաղուց փոխել է հունը և հոսում է ոչ թե կամրջի տակով, այլ կողքով)

1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12

1. Հատված Տիգրանակերտի (Ասկերանի շրջան) պարսպապատերից, մ.թ.ա. Ա դար
2. Հատված Ասկերանի բերդից
3. Հատված Չարաբերդի (Ջրաբերդ) դարպասին հարող պարսպապատերից (Մարտակերտի շրջան)
4. Փառիսոսի բերդը (Գետաբեկի շրջան)
5. Տեսարան Չարաբերդից (Ջրաբերդ)
6. Տեսարան Պահու բերդից (Քաշաթաղի շրջան)
7-8. Տեսարան Հանդաբերդից (Շահումյանի շրջան) և նրա կեղծ դարպասը
9. Գյուլիստանի բերդը (Շահումյանի շրջան)
10. Հատված Հակառակաբերդի (Մարտակերտի շրջան) պարսպապատերից
11. Հատված Ականաբերդի (Մարտակերտի շրջան) պարսպապատերից
12. Չարեք բերդը (Գետաբեկի շրջան)





1	2	3	4
5	6	7	8
9	10	11	12

1. Օխտը դռնե վանքը (Հադրութի շրջան), Զ-Է դդ.
2. Գանձասարի վանքը (Մարտակերտի շրջան), 1216-1238 թթ.
3. Երից մանկանց վանքը (Մարտակերտի շրջան), ԺԷ դար
4. Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին (Շուշիի շրջան), ԺԹ դար
5. Ծիծեռնավանքը (Քաշաթաղի շրջան), Ե-Է դդ.
6. Գտիչ վանքը (Հադրութի շրջան), 1241-1246 թթ.
7. Դադի վանքը (Շահումյանի շրջան), Ա-ԺԷ դդ.
8. Բանանցի (Ծիծեռնավանք) անապատը (Դաշկեսանի շրջան), ԺԷ դար
9. Խաթրավանքը (Մարտակերտի շրջան), ԺԲ-ԺԷ դդ.
10. Ամարասի վանքը (Մարտունու շրջան), Դ-ԺԹ դդ.
11. Ջրվշտիկի (Եղիշե առաքյալ) վանքը (Մարտակերտի շրջան), Ե-ԺԳ դդ.
12. Կատարո (Դիզափայտի) վանքը (Հադրութի շրջան), Դ-ԺԹ դդ.



Դրվագներ «Արցախի հայ ճարտարապետության հանրագիտարան» Գանձասարի վանքից (բնութագրումը՝ Ա. Յակոբսոնի)





Արցախյան խաչքարեր



Արցախյան պատկերաքանդակներ

ԱՐՑԱԽ

ՔԱՐՏԵԶԱԳԻՐՔ

Տեքստը՝ **Սամվել Կարապետյանի**

Լուսանկարները՝ **Արմանդո Թոփալյանի, Հովհաննես Բաղալյանի, Ժան-Միշել Թիերրիի, Մանվել Սարգսյանի, Արտակ Ղուլյանի, Արամ Օհանյանի (Կարմիր Արամ), Կարեն Ասատրյանի, Հրայր-Բազե Խաչերյանի, Սամվել Այվազյանի և Սամվել Կարապետյանի**

17, 19, 21, 23, 25, 27, 29 էջերի քարտեզները՝ **Սամվել Կարապետյանի**

Ձևավորումը և էջադրումը՝ **Արմեն Գևորգյանի**

Խմբագրումը և սրբագրումը՝ **Հասմիկ Հովհաննիսյանի**

Երևան 2016

ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ